

# ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**«ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ-Ի ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐ ՍԵՐԻՆԵ ՖԼՋՅԱՆԻ, ԻՐԻՆԱ ՕԳԱՆԵ-  
ԶՈՎԱՅԻ, ԱՆՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԵՎ ԱԳՆԵՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄ-  
ՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
204.28-ՐԴ ՆՈՒՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱ-  
ԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղ. Երևան

23 փետրվարի 2010թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Նարոյթունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թո-  
փուզյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող կողմի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Ա. Ղազարյանի  
և Կ. Մեժլումյանի, պատասխանող կողմի՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական  
ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության  
պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի  
1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի  
մասին» ՆՏ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Մելտեքս» ՍՊԸ-ի և քաղաքա-  
ցիներ Սերինե Ֆլջյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա Բաղդասարյանի և Ազնեսա  
Բաղդասարյանի դիմումների հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական դատավարության  
օրենսգրքի 204.28-րդ հոդվածի 1-ին կետի՝ Նայասրանի Նանրապետության Սահմանա-  
դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Մելտեքս» ՍՊԸ-ի եւ քաղաքացիներ Ս. Ֆլջյանի, Ի. Օզանեզովայի, Ա. Բաղդասարյանի եւ Ա. Բաղդասարյանի համապարասխանաբար՝ 19.08.2009թ., 31.08.2009թ. եւ 15.09.2009թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են, որոնց հիման վրա, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 39-րդ հոդվածով, մինչև դատաքննությունն սկսվելը գործերը միավորվել են դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պարասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, օրենսդրության այլ ակտեր, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաեւ սույն գործի առարկայի վերաբերյալ սահմանադրական դատարանի կայացրած որոշումները, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Դիմողների կողմից վիճարկվող «204.28» հոդվածը ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ներառվել է «ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով (ՆՕ-277-Ն), որը ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 20-ին եւ ուժի մեջ մտել 2008 թվականի հունվարի 1-ից: 204.28-րդ հոդվածը նախատեսված էր փոփոխությունների եւ լրացումների վերաբերյալ վերոհիշյալ օրենքի 72-րդ հոդվածով, որով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացվել էր «Վճիռների եւ որոշումների վերանայումը նոր հանգամանքներով» վերաառությունը կրող 3.2-րդ բաժնով: ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածով սահմանված էր նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու արդյունքում դատարանի իրավասությունը, այդ թվում՝ դիմումն առանց բավարարման եւ նախորդ դատական ակտն ուժի մեջ թողնելու վերաբերյալ (հոդվածի 1-ին կետը):

Սույն գործով դիմող՝ քաղաքացի Սերինե Ֆլջյանի՝ 14.05.2008թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումի հիման վրա՝ «ՆՏ քաղաքացիական դատավա-

րության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՏ օրենքի 80 հոդվածի 1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերի՝ ՆՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի քննության արդյունքում, սահմանադրական դատարանն իր՝ 09.09.2008 թվականի ՍԴՈ-758 որոշման եզրափակիչ մասի 5-րդ կետի համաձայն ՆՏ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչել վերոհիշյալ օրենքի նաեւ 72-րդ հոդվածը՝ ամբողջությամբ, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող 204.28-րդ հոդվածը: Այդ նորմի իրավաբանական ուժը կորցնելը սահմանադրական դատարանի կողմից «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 15-17-րդ մասերի հիմքով չի հետաձգվել, հետեւաբար՝ կիրառման մեջ պետք է դրվեր այդ որոշման հրապարակման պահից:

ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածի սահմանադրականության հարցին անդրադառնալիս սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշմամբ (13-րդ կետ) գտել էր, որ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման արդյունքում նախորդ դատական ակտն ուժի մեջ թողնելու դատարանի լիազորության օրենսդրական կարգավորման դեպքում պետք է հաշվի առնվի, որ օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին սահմանադրական դատարանի որոշման առկայության պարագայում նոր հանգամանքների հիմքով վերանայվող դատական ակտը բոլոր դեպքերում ուժի մեջ մնալ չի կարող, քանի որ այդ ակտով կիրառվել է հակասահմանադրական իրավանորմ, հետեւաբար, այդպիսի իրավակարգավորման բացակայությամբ էլ հիմնավորվել է ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի հակասությունը ՆՏ Սահմանադրությանը: Իսկ Նայաստանի Նանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի ուժի մեջ մտնող վճռի կամ որոշման հիմքով (մասնավորապես՝ ՄԻԵԳ-ի) դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելու իրավակարգավորման սահմանադրականության խնդրում սահմանադրական դատարանը գտել էր, որ այդ ակտերն ուժի մեջ թողնելու հարցը լուծելիս ՆՏ համապատասխան դատարանը հիմք է ընդունում այդ դատարանի վճռով (որոշմամբ) մարդու իրավունքների խախտման փաստը հաստատված կամ չհաստատված համարվելու իրողությունը:

2. Ինչպես հետեւում է գործի նյութերից, ՆՏ վճռաբեկ դատարանը թիվ 3-10 (ՏԳ) 2009թ., 3-11(ՏԳ)2009թ., 3-7(ՎԳ)2009թ. եւ 3-123(ՎԳ)2009թ. քաղաքացիական գործերով, քննելով «Մելլեքս» ՍՊԸ-ի, քաղաքացիներ Ա.Ֆլջյանի, Ի.Օզանեզովայի, Ա.Բաղդասար-

յանի եւ Ա.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքները՝ նոր հանգամանքների հիմքով ՏՏ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ քննչական գործերի պալատի 27.02.2004թ. թիվ 3-397(ՏԳ), 23.04.2004թ. թիվ 3-748(ՏԳ) որոշումները, ինչպես նաեւ ՏՏ վճռաբեկ դատարանի՝ 30.11.2007թ., 05.02.2007թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին», 18.06.2007թ. «Նոր հանգամանքների հիմքով որոշման վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին» որոշումները վերանայելու մասին, 2009թ. փետրվարի 19-ին, 2009թ. մարտի 13-ին եւ 2009թ. հուլիսի 24-ին կայացրել է սույն գործով վերջնական դատական ակտեր համարվող որոշումներ՝ կիրառելով ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ՏՏ սահմանադրական դատարանի ՍԳՈ-758 որոշմամբ իրավաբանական ուժը կորցրած 204.28-րդ հոդվածի դրույթները:

Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմանը հաջորդող ժամանակահատվածում ՏՏ Ազգային ժողովը 2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված ՏՕ-233-Ն օրենքով փոփոխություններ եւ լրացումներ է կատարել ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2-րդ բաժնում՝ կապված նոր հանգամանքներով վերանայման ենթակա դատական ակտերի տեսակները, դատական ակտերը վերանայելու իրավասություն ունեցող դատարանների կազմն ընդլայնելու հետ, սակայն 204.28-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը ՏՏ Սահմանադրությանը համապատասխանեցնելու խնդրին չի անդրադարձել, ինչի արդյունքում դատական պրակտիկայում կիրառվել է հակասահմանադրական ճանաչված այդ նորմը:

**3.** ՏՏ Սահմանադրության 102-րդ հոդվածի համաձայն սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են: «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սահմանադրական դատարանի որոշումները դրանց ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, առաքվում են դատավարության կողմերին, պետական իշխանության համապատասխան մարմիններին, այդ թվում՝ ՏՏ Ազգային ժողով եւ ՏՏ վճռաբեկ դատարան, հրապարակվում են Տայասրանի Տանրապետության պաշտոնական տեղեկագրում եւ սահմանադրական դատարանի տեղեկագրում: Իսկ նույն օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 66-րդ հոդվածի համաձայն սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում վերոհիշյալ նորմերի իրավաբանական բովանդակությունից նաեւ բխում է, որ.

- սահմանադրական դատարանի որոշումը որեւէ կերպ մեկնաբանման, վիճարկման ենթակա չէ,

- սահմանադրական դատարանի ՄԴՈ-758 որոշմանն անմիջականորեն պետք է հաջորդեր ՆՃ Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեությունը՝ կապված ոչ միայն «ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՆՃ օրենքի (ՆՕ-277-Ն) 80 եւ 76-րդ հոդվածների, ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2-րդ բաժնի 204.20 եւ 204.26-րդ հոդվածների համապատասխան նորմերը, այլեւ «ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՆՃ վերոհիշյալ օրենքի 72-րդ հոդվածում ընդգրկված 204.28-րդ հոդվածը ՆՃ Սահմանադրությանը հակասող ճանաչելու հետեւանքով ուժը կորցրած ճանաչելու եւ վերջինիս նախկին իրավակարգավորումը Սահմանադրությանը համապատասխանեցնելու հետ,

- սահմանադրական դատարանի ՄԴՈ-758 որոշմանը շահագրգիռ անձանց դիմումների հիման վրա պետք է հաջորդեին իրավական հետեւանքներ (նոր հանգամանքներ)՝ հանգեցնելով օրենքով սահմանված կարգով դատական այն ակտերը վերանայելուն, որոնցով կիրառվել են Սահմանադրությանը հակասող ճանաչված՝ ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածի դրույթները, ընդ որում՝ պարտադիր հաշվի առնելով նաեւ ՆՃ սահմանադրական դատարանի 2008 թվականի ապրիլի 15-ի ՄԴՈ-751 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ կապված նոր հանգամանքներով այն անձանց խախտված իրավունքները վերականգնելու անհրաժեշտության հետ, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման եւ փվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դադարեցումն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջեւ ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ», «Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենքներում դեռևս նախատեսված չէ ՆՏ սահմանադրական դատարանի կողմից ՆՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով օրենքը (վերջինիս դրույթը), ՆՏ Ազգային ժողովի որոշումը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու դեպքում ՆՏ Ազգային ժողովի կողմից սահմանադրական դատարանի այդպիսի որոշումից բխող անհրաժեշտ իրավակարգավորում, որպիսի հանգամանքը կարելուրվել է նաեւ ՆՏ սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի ամփոփման վերաբերյալ 2008 եւ 2009 թվականների փարեկան հաղորդումներով:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ, ինչպես վկայում է դատական պրակտիկան, հաճախ օրենքի այս կամ այն դրույթը ՆՏ Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներից կամ իրավակարգավորման ընդհանուր անհրաժեշտությունից բխող օրենսդրական փոփոխությունների եւ լրացումների հետ կապված իրավաբեխնիկական խնդիրների (այդ փոփոխությունները, լրացումները օրենքում ներառելու (ինկորպորացնելու)) ոչ լիարժեք լուծումը հանգեցնում է ոչ թե փոփոխված (լրացված) օրենքի, այլ դրանում կատարված փոփոխությունների եւ լրացումների վերաբերյալ օրենքի կիրառմանը, որը չի բխում «Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենքի պահանջներից եւ իրավակիրառական պրակտիկայում առաջացնում է անհստակություն:

**4.** «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի եւ 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն գործի քննության ցանկացած փուլում սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը, եթե «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-75-րդ (այդ թվում 69-րդ հոդվածում) եւ 77-րդ հոդվածներում նշված գործերով ներկայացված որեւէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը: Սույն գործով ներկայացված դիմումներում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի նախկինում կայացված որոշումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՆՏ Սահմանադրության 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 19, 32 եւ

60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Մելքեքս» ՍՊԸ-ի եւ քաղաքացիներ Սերինե Ֆլջյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա Բաղդասարյանի եւ Ազնեսա Բաղդասարյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

Արձանագրել, որ, նախ՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-758 որոշման 13-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշման եւ եզրափակիչ մասի 5-րդ կետի հիմքով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչվել նաեւ «ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ օրենքի (ՆՕ-277-Ն) 72-րդ հոդվածում ընդգրկված 204.28-րդ հոդվածը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված՝ ինչպես ՆՕ-233-Ն, այնպես էլ դրան հաջորդող որեւէ այլ օրենքով դեռեւս ՀՀ Սահմանադրությանը չի համապատասխանեցվել, երկրորդ՝ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջների հիմքով սպառված չպետք է համարվի սույն գործի առարկայի շրջանակներում նոր հանգամանքներով իրավասու դատարան դիմելու շահագրգիռ անձանց իրավունքը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**